

## Այցելություն Արարատի մարզ՝ «Ջրից դեպի շուկա»-ի ցուցադրական տեղամասեր

Հունիս ամսից սկսած ՀՄՀ-Հայաստանի թիմը վերսկսեց արտագնա հանդիպումների շարքը՝ նպատակ ունենալով անմիջական մասնակցություն ունենալ ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներին, պարզել դրանց արդյունավետությունը, շահառուների կարծիքները և խրախուսել լավագույն փորձը:

Արտագնա միջոցառումների առաջին փուլն իրականացվելու է Ջրից դեպի շուկա բաղադրիչի ուղղությամբ, որին ՀՄՀ-Հայաստանը տալիս է մեծ կարևորություն՝ հաշվի առնելով բաղադրիչի՝ բնակչության շրջանում վայելող մեծ հետաքրքրությունը: Հունիսի 6-ին կայացած առաջին այցելության թիրախը Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի առաջավոր Արարատի մարզն էր, այնտեղ «Բարձրաժեք գյուղատնտեսություն» և «Ներտնտեսային ջրի կառավարում» բաղադրիչներով հիմնադրված ցուցադրական տնտեսությունները: Հանդիպմանը մասնակիցում էին ՀՄՀ-Հայաստանի Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը, ՀՄԿ Հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Ալեքս Ռ-ասինը, Շահառուների խորհրդի անդամ Աշոտ Ռսկանյանը և այլոք:

### Առաջին կանգառ՝ Արարատի մարզ գյուղ Նարեկ

#### Չուցադրական տնտեսություն՝ արմատակալներ և տնկիներ

Հարություն Ղարամանյանին պատկանող փոքր հողակտորի վրա (1000ք.մ.), որտեղ ավանդաբար մշակվել է բանջարաբոստանային կուլտուրաներ, ՀՄՀ-Հայաստանի շնորհիվ հիմնվել է պտղատու այգի և տնկարան: «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի իրականացնողների խորհրդատվության համաձայն՝ անցումը դեպի գյուղատնտեսական նոր արտադրանքի Հ. Ղարամանյանի տնտեսության եկամուտները նկատելիորեն կբարձրացնեն և կդասեն նրան համայնքի առաջավոր ֆերմերների շարքին:



*Տնկարան Այգեգարդում*

Տնտեսությունում ներկայացված են 79 արմատակալներ և համապատասխան տնկիներ՝ 5 տարբեր սորտի կեռասենիներ և խնձորենիներ՝ ներկրված ԱՄՆ-ից և Ռուսաստանից: Ծրագրի պատասխանուտու Վարդան Թոռչյանի պնդմամբ պտղատուների նոր տեսակների ներկրումը Հայաստան անհրաժեշտ է տեղական սորտերի թարմեցման և բազմազանության ապահովման համար: Մասնագետները ֆերմերներին կսովորեցնեն պատվաստել և նոր արմատակալներից անընդմեջ ստանալ թզուկաճ ծառատեսակներ: Վերջիններս նորույթ են տեղական շուկայի համար և ունեն բազմաթիվ առավելություններ ավանդական տնկիների նկատմամբ, մասնավորապես, ապահովում են շուտ բերքատվություն (տնկման 2-րդ, 3-րդ տարում), նույն հողատարածքում հնարավոր է տնկել ավելի շատ թվով ծառեր (մոտ 2 ու կես անգամ) և այլն: Նարեկ գյուղի տնկարանը, ինչպես նաև 2008թ. հիմնված մի շարք այլ տնկարաններ, պատրաստ կլինի ընդունել շահագրգիռ ֆերմերներին 2009թ. սեպտեմբերին:

«Մենք կցանկանայնք տեսնել, որ հայ ֆերմերը գիտակցում է, որ սա, պարզապես, տնկարան չէ, այլ կարևոր ներդրում ՀՄՀ-Հայաստանի կողմից ուղղված գյուղական տնտեսությունների բարելավմանը և առաջընթացին», - նշեց ՀՄԿ Հայաստանի տնօրեն Ալեքս Ռասինը:

### **Երկրորդ կանգառ՝ Արարատի մարզ գյուղ Ավշար**

#### **Ցուցադրական տնտեսություն՝ ջերմոցում կաթիլային ոռոգում**

Հարություն Հովհաննիսյանին պատկանող ջերմատանը հիմնադրված կաթիլային ոռոգման համակարգի շնորհիվ ֆերմերը զգալիորեն կրճատել է ծախսերը և անցել դեպի ավելի եկամտաբեր գյուղատնտեսության, մասնավորապես, նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տվել խնայել ջրի մեծ քանակներ, քչացնել աշխատուժը և բարձրացնել բերքատվությունը: Նա, հատկապես, կարևորեց կաթիլային ոռոգման նոր համակարգը՝ խողովակների ամրության, ճկունության, երկարակեցության (առնվազն 5 տարի երաշխիքային կիրառություն) առումներով:

Այնուամենայնիվ, Հարությունը խոսեց նաև բազմաթիվ այլ խնդիրների մասին, որոնք խոչընդոտում են իր ամենօրյա աշխատանքը արդյունավետ կազմակերպելուն և ցանկություն հայտնեց հայտ ներկայացնել ՀՄՀ-Հայաստանի վարկային ծրագրին մասնակցելու նպատակով:

«Մեզ համար առանձնահատուկ կարևորություն ունեն Ձեր այցելությունները. դրանք ոգևորում են մեզ և դրդում գործել էլ ավելի մեծ եռանդով և հանդես գալ նոր նախաձեռնություններով», - նշեց Հարություն Հովհաննիսյան:

### **Երրորդ կանգառ. Արարատի մարզ գյուղ Դարակերտ**

Բանջարեղենի և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնում տեղ են գտել ծրագրային մի շարք նորամուծություններ և նոր տեխնոլոգիաներ, մասնավորապես,

միկրոանձրևացմում, բանջարեղենի սածիլների արտադրություն, որոնք բաց են ֆերմերների ամենօրյա դիտարկման և կիրառության համար: Այս անգամ մեր ուշադրության առարկան էր կենտրոնում տեղադրված պոլիէթիլենային ծածկույթով ջերմատները:

Վարդան Թոռչյանը հավաստմամբ արտասահմանում մեծ տարածում գտած ջերմատների առաջին խմբաքանակի ներմուծումը մեծ հետաքրքրություն և պահանջարկ առաջացրեց գյուղաբնակների շրջանում: Սա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

ա) հատուկ մեթոդներով մշակված գալվանացված խողովակները իրենց հարթության շնորհիվ չեն վնասում պոլիէթիլենային թաղանթը

բ) դրանք հեշտ հավաքվող են և ունի կիրառման 4-5 տարի երաշխիք

գ) երկշերտանի թաղանթի մեջտեղում տեղադրված ֆենն ապահովում է պաշտպանություն արտաքին գործոններից

դ) փակվող-բացվող պատուհանների շնորհիվ ապահովվում է օդափոխությունը և այլն:

Ջերմատները նախատեսված են վաղ գարնանը և ուշ աշնանը բերք ստանալու համար: Ներկայումս բանակցություններ են տարվում մի շարք արտադրողների հետ Հայաստանում նմանօրինակ կառույցների պատրաստման ուղղությամբ: Եթե այս նախաձեռնությունը կյանքի կոչվի, ֆերմերները հնարավորություն կունենան ձեռք բերել ջերմատները մատչելի գներով:



*«Ջրից դեպի շուկա» բաղադրիչի մասնագետ Մերգեյ Մելոյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառու Հարություն Հովհաննիսյան*

Այցելության ընթացքում իր ակտիվ մասնակցությամբ և խորհուրդներով Շահառուների խորհրդի անդամ Աշոտ Ոսկանյանը ոգևորում էր բոլոր ֆերմերներին, միևնույն ժամանակ, արդարացիորեն մատնանշում իրենց թերացումները: «Ընդհանուր առմամբ, արված աշխատանքը գնահատում եմ շատ դրական, նկատվում է ագրոմշակության կուլտուրաների բարձրացում», - ամփոփեց պարոն Ոսկանյանը: